ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ և ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՆԻ ՍԱՄՎԵԼԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱԹՎԵՐԻ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԶԱՐԳԱՑՈՂ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ

Ը.00.01- «Ընդհանուր տնտեսագիտություն» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ-2017

Ատենախոսության թեման հաստատվել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում

Գիտական ղեկավար՝ տնտեսագիտության դոկտոր, դոցենտ
Արծրունի Երջանիկի Թորոսյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Սամսոն Աշոտի Դավոյան

տնտեսագիտության թեկնածու
Հայկ Համլետի Մինասյան

Առաջատար կազմակերպություն՝ Հայ-ռուսական համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2017 թվականի դեկտեմբերի 8-ին, ժամը 13^{30}-ին Երևանի պետական համալսարանում գործող ՀՀ ԲՈՀ-ի տնտեսագիտության թիվ 015 մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ 0009, ք. Երևան, Աբովյան փ. 52:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2017 թվականի նոյեմբերի 7-ին:

015 Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ա.Հ.Առաքելյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության թեմայի արդիականությունը: Համաշխարհային տնտեսության զարգացման արդի միտումները նոր մարտահրավերներ են առաջադրում զարգացող տնտեսությամբ երկրներին, որոնց հաղթահարմանն ուղղված ծրագրերի մշակումն ու հետևողական իրականացումը շարունակում է մնալ օրակարգային: Այս առումով, սոցիալ-տնտեսական վերափոխումների քաղաքականությունը հանդիսանում է տնտեսության զարգացման կարևորագույն գրավականը:

Սոցիալ-տնտեսական վերափոխումների քաղաքականության առանցքային բաղադրիչը վերափոխումների արդյունքների քանակական գնահատումն է, որը տեսական հիմնավորվածության և գործնական նշանակության տեսանկյունից կարևորագույն դերակատարություն ունի վերափոխումների քաղաքականության ուղենիշների հստակեցման, ճշգրտման, իրագործման սկզբունքների ու մեթոդների մշակման և ցանկալի արդյունքների ապահովման համար: Այդ իսկ պատճառով, վերափոխումների արդյունքների գնահատումը միշտ էլ եղել է տարբեր հեղինակավոր կառույցների և մասնագետների հետազոտության հանգուցային դիտակետում: Այսպես՝ տարբեր միջազգային կառույցներ՝ Համաշխարհային բանկը, Համաշխարհային տնտեսական համաժողովը, Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկը, Բերթելսման հիմնադրամը և այլն, փորձում են մշակել վերափոխումների ընդհանրական ամենատարբեր ցուցանիշներ, որոնք այս կամ այն չափով գնահատում են առանձին ոլորտներում իրականացվող վերափոխումների արդյունքները: Ընդհանուր առմամբ, այս համալիր գնահատականների ձևավորման հիմքում հիմնականում ընկած է միևնույն մոտեցումը. ընտրվում են սոցիալ-տնտեսական վերափոխումները բնութագրող ոլորտները, առանձնացվում ոլորտը նկարագրող հիմնական քանակական և որակական ցուցանիշներն ու դրանց արժեքների միջինացման հիման վրա դուրս է բերվում ընդհանրական գնահատականը:

Չնայած վերափոխումների ընդհանրական ցուցանիշների ձևավորման վերոնշյալ մոտեցումը տնտեսագիտական տրամաբանության շրջանակներում է, այնուհանդերձ, դրանց հաշվարկման մեթոդաբանությունը բավականին սահմանափակ է և խնդրահարույց: Հարկ է նշել, որ ընդհանրական գնահատականների ձևավորման առաջնային հիմնահարցը պայմանավորված է այն հանգամանքով, թե որքանով են դրանք համակողմանիորեն բնութագրում «սոցիալ-տնտեսական վերափոխում» երևույթը: Այս տեսանկյունից, ընդհանրական գնահատականների ճնշող մեծամասնությունը բնորոշում է ոչ թե սոցիալ-տնտեսական վերափոխումներն ամբողջությամբ, այլ դրա առանձին ուղղությունները, ինչի հետևանքով էլ վերափոխումների առանձին ոլորտներ դուրս են մնում գնահատման տիրույթից: Այս իմաստով, վերափոխումների համակողմանի գնահատման խնդիր է առաջանում, որի լուծումը հնարավորություն

կտա բացառել վերափոխումների մասնակի գնահատման հիմնահարցը և ստանալ իրականությանը համապատասխանող պատկեր:

Վերափոխումների ընդհանրական գնահատականի հաշվարկման մյուս մեթոդական բացթողումը դրա բաղադրիչների պարզ միջինացումն է: Սա լուրջ մեթոդական թերություն է, քանի որ վերափոխումների բնութագրման տեսանկյունից, ընդհանրական գնահատականի բաղադրիչ ցուցանիշներն ունեն տարբեր կարևորություն, հետևապես պետք է ունենան տարբեր տեսակարար կշիռներ:

Վերոնշյալ հիմնահարցերի լուծման անհրաժեշտությունն էլ պայմանավորում է ատենախոսության թեմայի արդիականությունն ու հրատապությունը՝ սոցիալ-տնտեսական վերափոխումների արդյունքների օբյեկտիվ արտացոլման, վերափոխումների խորացման հնարավորությունների և խոչընդոտների վերհանման, ստացված գնահատականների հիման վրա սոցիալ-տնտեսական վերափոխումների ռազմավարական մոտեցումների մշակման և իրագործման համար:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Ատենախոսության հիմնական նպատակը սոցիալ-տնտեսական վերափոխումների արդյունքների համակողմանի գնահատման համաթվերի մեթոդաբանության բարելավման խնդիրների բացահայտումն ու դրանց լուծման հնարավոր ուղիների ներկայացումն է:

Նշված նպատակի իրագործման համար ատենախոսությունում դրվել և լուծվել են հետևյալ խնդիրները.

- ուսումնասիրել տարբեր հեղինակավոր միջազգային կառույցների և հետազոտական կենտրոնների կողմից սոցիալ-տնտեսական վերափոխումների ընդհանրական ցուցանիշների հաշվարկման մեթոդաբանական առանձնահատկությունները,
- վերհանել վերափոխումների արդյունքների համակողմանի գնահատման հիմնահարցերը և հիմնավորել դրանց լուծման անհրաժեշտությունը,
- վերլուծել և գնահատել զարգացող երկրներում սոցիալ-տնտեսական վերափոխումների արդյունքները,
- բացահայտել զարգացող տնտեսությամբ երկրներում սոցիալ-տնտեսական վերափոխումների իրականացման առանձնահատկություններն ու ուղղվածությունը, քանակապես գնահատել սոցիալ-տնտեսական վերափոխումների տեսանկյունից չափանմուշային երկրից մյուս երկրների տարբերության չափը,
- սոցիալ-տնտեսական վերափոխումների ցուցանիշների համախմբության հիման վրա իրականացնել զարգացող տնտեսությամբ երկրների դասակարգում և համեմատական վերլուծություն, գնահատել սոցիալ-տնտեսական վերափոխումների ցանկալի արդյունքներից շեղումը,
- մշակել սոցիալ-տնտեսական վերափոխումների ընդհանրական գնահատման մեթոդական մոտեցում՝ հիմնական շեշտադրումը կատարելով սոցիալ-տնտեսական վերափոխումների ընդհանրական համաթվի բաղադրիչ

ցուցանիշների հարաբերական կարևորությունից բխող կշռային գործակիցների որոշման վրա:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Հետազոտության օբյեկտը զարգացող երկրներում իրականացվող սոցիալ-տնտեսական վերափոխումներն են, իսկ առարկան՝ սոցիալ-տնտեսական վերափոխումների ընդհանրական գնահատականների հաշվարկման մեթոդական մոտեցումները, դրանց հիմնահարցերը և կատարելագործման ուղիները:

Հետազոտության տեսամեթոդական և տեղեկատվական հիմքերը: Հետազոտության համար տեսամեթոդաբանական հիմք են ծառայել ՀՀ Սահմանադրությունը, սոցիալ-տնտեսական ոլորտը կարգավորող ՀՀ օրենքները, ՀՀ Կառավարության որոշումները, սոցիալ-տնտեսական վերափոխումների վերաբերյալ հայրենական և արտասահմանյան մասնագետների հրապարակումները:

Ատենախոսության համար տեղեկատվական աղբյուր են հանդիսացել Համաշխարհային բանկի, Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի, Բերթելսման հիմնադրամի հրապարակումները, միջազգային տարբեր կազմակերպությունների հաշվետվությունները, գիտամեթոդական մշակումներն ու տեղեկագրերը, վիճակագրական-վերլուծական նյութերը:

Հետազոտության ընթացքում կիրառվել են գիտական վերացարկման, վերլուծության և համադրության, գործոնային և համակարգային, տնտեսավիճակագրական, համեմատական, պատմատրամաբանական, ինչպես նաև գրաֆիկական վերլուծության մեթոդները:

Հետազոտության հիմնական գիտական արդյունքները և նորույթը: Ատենախոսությունում ստացված արդյունքներն ունեն տեսամեթոդական և կիրառական նշանակություն, որոնցից գիտական նորույթ են հետևյալները.

- ✓ Գնահատվել են զարգացող տնտեսությամբ երկրներում սոցիալ-տնտեսական վերափոխումների արդյունքները, դուրս են բերվել լավագույն վերափոխումներ իրականացրած երկրների խմբի ընդհանրական բնութագրիչները:
- ✓ Գործոնային վերլուծության գործիքակազմի կիրառմամբ հիմնավորվել է, որ զարգացող տնտեսությամբ երկրներում սոցիալ-տնտեսական վերափոխումները իրականացվել են երկու տարբեր մոդելներով՝ «ինստիտուցիոնալ» և «տնտեսական»:
- ✓ Գնահատվել է սոցիալ-տնտեսական վերափոխումների տեսանկյունից չափանմուշային երկրի բնութագրիչները, հետազոտվել են դրանցից մյուս երկրների տարբերությունները՝ բացահայտելու «տնտեսական վերափոխումների» հետամնացության աստիճանը:
- ✓ Մշակվել է սոցիալ-տնտեսական վերափոխումների արդյունքների համալիր գնահատման մեթոդական մոտեցում, որի առանցքում սոցիալ-տնտեսական վերափոխումների ընդհանրական համաթվի բաղադրիչների հարաբերական կարևորությունից ելնելով տեսակարար կշիռների դուրսբերումն է:

Հետազոտության արդյունքների գիտագործնական և կիրառական նշանակությունը: Հետազոտության որոշ դրույթներ օգտագործվում են Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում՝ «Տնտեսագիտության տեսություն» դասընթացի ծրագրում: Հետազոտության գիտական արդյունքներն ու ներկայացված առաջարկությունները կարող են օգտագործվել զարգացող տնտեսությամբ երկրներում սոցիալ-տնտեսական վերափոխումների արդյունքների համալիր և համակողմանի գնահատման գործիքների ու մեթոդների ընտրության և կիրառման, վերափոխումների քաղաքականության գերակայությունների և ուղղությունների հստակեցման, սոցիալ-տնտեսական վերափոխումների քաղաքականության նպատակայնության բարձրացման համար: Հետազոտության հիմնական արդյունքները կարող են օգտագործվել ՀՀ Կառավարության կողմից սոցիալ-տնտեսական վերափոխումների քաղաքականություն մշակելիս: Ատենախոսության տեսամեթոդական և գործնական որոշ արդյունքներ կարող են օգտագործվել նաև զարգացող տնտեսությամբ երկրներում սոցիալ-տնտեսական վերափոխման քաղաքականության բարելավման հիմնահարցերով զբաղվող մասնագիտական և հետազոտական շրջանակների համար:

Հետազոտության արդյունքների փորձարկումը և հրապարակումները: Ատենախոսության որոշ դրույթներ զեկույցով ներկայացվել են «Զարգացման ժամանակակից մարտահրավերները» և «Գործարար միջավայրի բարելավման և միջազգային տնտեսական համագործակցության ընդլայնման արդի հիմնախնդիրները ՀՀ-ում» խորագրերով կազմակերպված ՀՊՏՀ 24-րդ և 26-րդ գիտաժողովներում, «Տնտեսագիտության ժամանակակից հիմնահարցեր» խորագրով Երևանի պետական համալսարանի Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի կազմակերպած ուսանողների, ասպիրանտների և երիտասարդ գիտնականների 4-րդ գիտաժողովում:

Ատենախոսության հիմնական դրույթներն ու արդյունքները հրապարակվել են ատենախոսի հինգ գիտական հոդվածներում:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը: Աշխատանքի կառուցվածքը բխում է հետազոտության նպատակից և խնդիրներից: Այն բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացություններից և առաջարկություններից, օգտագործված գրականության ցանկից ու հավելվածներից: Ատենախոսության ընդհանուր ծավալը՝ ներառյալ գրականության ցանկը, կազմում է 120 էջ (առանց հավելվածի), այն ներառում է 26 աղյուսակ, 4 գծապատկեր և 11 հավելված:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության **ներածությունում** հիմնավորվել է թեմայի արդիականությունը, ներկայացվել են հետազոտության նպատակը և խնդիրները, առարկան և օբյեկտը, տեսամեթոդական և տեղեկատվական հիմքերը, ձևակերպվել են աշխատանքի հիմնական արդյունքները և գիտական նորույթը, ստացված արդյունքների գիտական ու գործնական նշանակությունը:

Ատենախոսության առաջին՝ «**Սոցիալ-տնտեսական վերափոխումների էությունը և արդյունքների գնահատման մեթոդաբանական հիմքերը**» **գլխում** ներկայացվել է սոցիալ-տնտեսական վերափոխումների էությունը, դիտարկվել են հիմնական բնութագրիչներն ու փուլերը, ուսումնասիրվել են սոցիալ-տնտեսական վերափոխումների արդյունքների գնահատման մեթոդական մոտեցումները:

Սոցիալ-տնտեսական համակարգի վերափոխումների ոլորտում տեսական հետազոտությունների արդյունքների վրա հենվելով, գտնում ենք, որ սոցիալ-տնտեսական վերափոխումները շուկայական տնտեսակարգի ձևավորման գործընթացում տնտեսական հարաբերությունների և կապերի, տնտեսավարման համակարգի տարրերի և դրանց կառուցվածքների, սոցիալ-տնտեսական քաղաքականության իրականացման գերակայությունների, միջոցների և ուղիների փոփոխություններն են, որոնք ուղղված են տնտեսության զարգացմանը:

Շուկայական տնտեսության ձևավորման ճանապարհին զարգացող տնտեսությամբ երկրները կանգնած են վերափոխումների կենսունակ քաղաքականության մշակման ու իրագործման խնդրի առջև: Հարկ է նկատել, որ պետական քաղաքականության իրականացման նպատակայնության ապահովումը անխուսափելիորեն կապված է գերակայությունների հստակեցման, համահունչ քաղաքականության մեխանիզմների ու մեթոդների մշակման և իրականացման հետ, որոնք վերափոխումների արդյունքների պարբերաբար գնահատման անհրաժեշտություն են առաջացնում: Այս առումով, կարևոր նշանակություն է ստանում վերափոխումների արդյունքները գնահատող ընդհանրական ցուցանիշների ուսումնասիրությունը, դրանց հաշվարկման հիմնախնդիրների վերհանումն ու լուծմանն ուղղված առաջարկությունների մշակումը:

Ներկայումս մասնագիտական ու հետազոտական շրջանակներում մշակվում են տարբեր համաթվեր, որոնք այս կամ այն չափով գնահատում են տարբեր ուղղություններում իրականացրած սոցիալ-տնտեսական վերափոխումները, բացահայտում վերափոխումների արդյունքների փոփոխման միտումները: Իրենց առավելություններով հանդերձ, վերափոխումների արդյունքները գնահատող համաթվերի ձևավորման մեթոդական մոտեցումները բավարար չեն կարող համարվել: Այս իմաստով, սոցիալ-տնտեսական վերափոխումների ընդհանրական ցուցանիշների հաշվարկման մեթոդաբանության կատարելագործման հիմնահարցերը դեռևս շարունակում են մնալ օրակարգային:

Ատենախոսության երկրորդ՝ «**Զարգացող տնտեսությամբ երկրներում իրականացված սոցիալ-տնտեսական վերափոխումների գնահատումը**» **գլխում**

վերլուծվել է զարգացող տնտեսությամբ երկրներում իրականացրած սոցիալ-տնտեսական վերափոխումների քաղաքականության ուղենիշները, իրականացվել է զարգացման տարբեր մակարդակ ունեցող երկրների դասակարգում ըստ վերափոխումների արդյունքների, սահմանվել լավագույն արդյունք արձանագրած երկրների վերափոխումների քանակական բնութագրիչները, ինչպես նաև դուրս են բերվել սոցիալ-տնտեսական վերափոխումների լավագույն արդյունք արձանագրած երկրների խմբի համար վերափոխումների ցուցանիշների շեմային արժեքները:

Սոցիալ-տնտեսական վերափոխումների քաղաքականության ուղենիշների փոփոխությունը բացահայտելու համար դուրս է բերվել վերափոխումների անբացահայտ ընդհանրական գործոնները, որոնք պայմանավորել են առանձին ժամանակահատվածներում զարգացող տնտեսությամբ երկրներում վերափոխումների ռազմավարության գերակայությունները և ոլորտները: Սույն խնդիրը մեր կողմից փորձ է արվել լուծել գործոնային վերլուծության գործիքակազմի կիրառմամբ, որը հնարավորություն է տալիս դուրս բերել վերափոխումները բնութագրող ցուցանիշներում առկա անբացահայտ (լատենտային) փոփոխականները (գործոնները)[1]:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ գործոնային վերլուծության արդյունքում ստացված անբացահայտ գործոնները արտացոլում են վերափոխումների ընդհանրական բնութագրիչները, հետևապես, գործոններից յուրաքանչյուրը կարելի է դիտարկել որպես վերափոխումների առանձին մոդել, իսկ գործոնի կառուցվածքը՝ որպես վերափոխումների կոնկրետ մոդելի նկարագիր:

Ըստ այդմ, SPSS ծրագրային փաթեթի գործադրմամբ 1990-2014թթ.-ին իրականացրել ենք գործոնային վերլուծություն, որի առանցքում ՎԶԵԲ-ի կողմից զարգացման տարբեր մակարդակ ունեցող 28 երկրների[2] համար հաշվարկվող վերափոխումների հետևյալ վեց ցուցանիշների արժեքներն են՝ խոշոր կազմակերպությունների մասնավորեցում, փոքր կազմակերպությունների մասնավորեցում, կառավարում և ձեռնարկությունների վերակառուցում, գների ազատականացում, փոխարժեքի և առևտրի ազատականացում, մրցակցային քաղաքականություն:

1990-2014թթ.-ին իրականացված գործոնային վերլուծության արդյունքներից կարելի է եզրակացնել, որ առանձին ժամանակահատվածներում ստացված մոդելների բնութագրիչները որոշակի ընդհանրություններ ունեն: Մասնավորապես, առանձին տարիներին համընկնում են ինչպես վերափոխումների մոդելների թիվը, այնպես էլ դրանց կառուցվածքը: Ըստ այդմ էլ, վերափոխումների մոդելների կառուցվածքի ընդհանրություններից ելնելով դիտարկվող 28 երկրներում 1990-

---

[1]Տե՛ս Орлова И.В. и др, Многомерный статистический анализ в экономических задачах: Компьютерное моделирование в SPSS, Учебное пособие, Москва, 2009, էջ 154:

[2]Ալբանիա, Ադրբեջան, Բելառուս, Բոսնիա և Հերցեգովինա, Բուլղարիա, Էստոնիա, Թուրքմենստան, Ուզբեկստան, Ուկրաինա, Հայաստան, Հունգարիա, Սերբիա, Լեհաստան, Լատվիա, Խորվաթիա, Ռուսաստան, Ռումինիա, Լիտվա, Սլովենիա, Սլովակիա, Տաջիկստան, Վրաստան, Ղազախստան, Մակեդոնիա, Մոլդովա, Չեռնոգորիա, Մոնղոլիա և Ղրղզստան:

2014թթ.-ին իրականացրած վերափոխումների ողջ ընթացքը կարելի է պայմանականորեն բաժանել հետևյալ երեք ժամանակահատվածների՝ 1990-1992թթ., 1993-2006թթ., և 2007-2014թթ.:

Ատենախոսությունում ներկայացվել է յուրաքանչյուր ժամանակահատվածում մոդելների բնութագրիչները: Այսպես, 1990-1992թթ. առանձնացվում էր վերափոխումների երկու մոդել, որոնցից մեկը շեշտադրում է խոշոր կազմակերպությունների մասնավորեցումը, մրցակցային քաղաքականությունը, կառավարում և ձեռնարկությունների վերակառուցումը, իսկ մյուսը՝ մասնավորեցումն ու ազատականացումը: Հաջորդ տարիներին վերափոխումները իրականացվել են մեկ միասնական մոդելի շրջանակներում: Հատկանշական է, որ 1993-2006թթ.-ին զարգացող տնտեսությամբ երկրների վերափոխումների ռազմավարությունում առավել փոքր դերակատարություն է ունեցել մրցակցային քաղաքականություն բաղադրիչը: Ինչ վերաբերվում է 2007-2014թթ.-ին, ապա այս ժամանակահատվածում դիտարկվող 28 երկրներում վերափոխումների բոլոր ուղղություններում համալիր կերպով բարեփոխումներ են կատարվել՝ հանգեցնելով բաղադրիչների նշանակալիության գնահատականների համահավասարեցմանը: Այսպես՝ եթե նախորդ տարիներին առավել ընդգծված է վերափոխումների բոլոր վեց ցուցանիշների նշանակալիության գնահատականների տարբերությունները, ապա այս ժամանակահատվածում այն առավել թույլ է արտահայտված:

Ատենախոսությունում նաև փորձ է արվել վերափոխումների մասնակի ցուցանիշների լայն հավաքածուի հիման վրա իրականացնել զարգացման տարբեր մակարդակ ունեցող երկրների դասակարգում և համեմատական վերլուծություն: Սույն խնդիրը լուծելու համար օգտվել ենք կլաստերային վերլուծության գործիքակազմից:

Դիտարկվել են ինչպես Բերթելսման հիմնադրամի վերափոխումների գնահատականները, այնպես էլ բնակչության կենսամակարդակը, քաղաքական ինստիտուտների և տնտեսության զարգացման մակարդակը բնութագրող ցուցանիշների լայն հավաքածու:

Ատենախոսությունում ներկայացվել է զարգացման տարբեր մակարդակ ունեցող 100 երկրների համար 2016թ.-ի ցուցանիշների հիման վրա կատարված կլաստերային վերլուծության արդյունքները:

Կլաստերացման արդյունքում ձևավորվել են 3 կլաստերներ: Կլաստերներից յուրաքանչյուրի նկարագրման տեսանկյունից լայն և բազմաշերտ առարկայական տիրույթ է կլաստերներից յուրաքանչյուրում ըստ վերափոխումների առանձին ցուցանիշների արձանագրված միջին արժեքների վերլուծությունը: Դրանցից ելնելով՝ կարելի է պատկերացում կազմել կլաստերների բնույթի մասին: Այսպես, վերափոխումները բնութագրող բոլոր գնահատականներով ամենաբարձր արժեքներ արձանագրել են երրորդ կլաստերում ընդգրկված երկրները, ուստի՝ այն կարող ենք բնորոշել որպես «լավագույն»: Նույն տրամաբանությամբ առաջին և երկրորդ կլաստերներին կարող ենք տալ համապատասխանաբար «վատագույն» և «միջին» անվանումները: Այս իմաստով, կարող ենք ասել, որ այն երկրները, որոնք

նշանակալի սոցիալ-տնտեսական վերափոխումներ են իրականացրել կհայտնվեն լավագույն կլաստերում՝ ապահովելով վերափոխումների ցուցանիշների ամենաբարձր արժեք:

Կլաստերների կազմի վերլուծությունը ցույց է տալիս, որ առաջին կլաստերում գերակշռում են թերզարգացած ժողովրդավարական ինստիտուտներ ունեցող և սոցիալ-տնտեսական զարգացման համեմատաբար ցածր մակարդակ ունեցող երկրները: Ուստի՝ կարող ենք եզրակացնել, որ այս երկրներում դեռևս լայնամասշտաբ սոցիալ-տնտեսական վերափոխումների անհրաժեշտություն կա:

Նույն տրամաբանությունը կիրառելով երկրորդ խմբում ընդգրկված երկրների համար՝ կարող ենք փաստել, որ չնայած այս երկրները սոցիալ-տնտեսական վերափոխումներ են նախաձեռնել, սակայն դեռևս ցածր արդյունքներ են արձանագրել: Ուստի՝ այս երկրներում շարունակվում են իրականացվել ինստիտուցիոնալ և կառուցվածքային վերափոխումներ:

Ինչ վերաբերվում է երրորդ կլաստերին, ապա այստեղ հիմնականում տեղ են գտել առավել նպատակային վերափոխումներ իրականացրած և համեմատաբար բարձր արդյունքներ արձանագրած երկրները: Հատկանշական է, որ այս խմբում են ընդգրկված առավել կայացած և գործուն ինստիտուտներ, սոցիալ-տնտեսական զարգացման համեմատաբար բարձր մակարդակ ունեցող այնպիսի երկրներ, ինչպիսիք են Սինգապուրը, Հարավային Կորեան, Լեհաստանը, Ռումինիան, Էստոնիան և այլն:

Նմանատիպ վերլուծություն իրականացրել ենք նաև 2003-2014թթ. առանձին ժամանակահատվածների համար: Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ եթե 2008թ. և 2016թ. կլաստերացման արդյունքում ստացել ենք 3 կլաստերներ, ապա 2003-2014թ. համար կլաստերների օպտիմալ քանակը կազմել է 2: Այսինքն, 2003-2014 թվականների համար ձևավորված 2 կլաստերներից 1-ը հետագայում տարալուծվել է 2-ի: Մեր կարծիքով, սա խոսում է վերջին տարիներին զարգացող տնտեսությամբ երկրներում իրականացված վերափոխումների ռազմավարությունների տարամիտման մասին:

Հետազոտության մեկ այլ կարևոր արդյունք է լավագույն կլաստերում հայտնվելու համար վերափոխումների ցուցանիշների շեմային արժեքների դուրսբերումը: Այն ստանալու համար հիմք ենք ընդունել առանձին ցուցանիշներով լավագույն կլաստերի վատագույն արդյունքները: Շեմային արժեքները վերափոխումների ցուցանիշների այն նվազագույն արժեքներն են, որոնց պետք է ձգտի երկիրը լավագույն կլաստերում հայտնվելու համար: Այս կերպ ակնհայտ է դառնում առանձին երկրների ցուցանիշների շեղումը լավագույն կլաստերի բնութագրիչներից, որը կարևոր նշանակություն ունի վերափոխումների քաղաքականության նպատակայնության ապահովման տեսանկյունից:

Նմանատիպ վերլուծություն իրականացրել ենք Հայաստանի համար, որի արդյունքները վկայում են, որ որոշ գնահատականներով, մասնավորապես՝ քաղաքական մասնակցություն, ժողովրդավարական ինստիտուտների կայունություն, քաղաքական և սոցիալական ինտեգրում ցուցանիշներով,

Հայաստանը չնայած զիջում է լավագույն կլաստերի ցուցանիշների միջին արժեքները, այնուամենայնիվ, գերազանցում՝ լավագույն կլաստերի շեմային ցուցանիշները: Մինչդեռ վերափոխումների տեսանկյունից կարևոր նշանակություն ունեցող շուկա ու մրցակցություն, իրավունքի գերակայություն, ռեսուրսների արդյունավետ օգտագործում, կայունություն ցուցանիշներով Հայաստանը նկատելիորեն հետ է մնում լավագույն կլաստերի վատագույն արդյունք արձանագրած ցուցանիշներից: Այս համատեքստում կարևոր նշանակություն է ստանում պետական այնպիսի քաղաքականության մշակումն ու իրականացումը, որի առանցքում պետք է լինի մրցակցային միջավայրի ձևավորումը, կառավարության կողմից ռեսուրսների արդյունավետ օգտագործումը, վերափոխումների կառավարման արդյունավետության բարձրացումը, կոռուպցիայի դեմ պայքարը, անկախ դատական համակարգի ձևավորումը, քաղաքացիական իրավունքների երաշխավորումն ու իրացումը:

Ատենախոսության երրորդ՝ **«Սոցիալ-տնտեսական վերափոխումների գնահատման մեթոդաբանության կատարելագործման ուղիները» գլխում** ներկայացվել է սոցիալ-տնտեսական վերափոխումների ընդհանրական համաթվի ձևավորման մեթոդական մոտեցում, որի հիմքում համաթվի բաղադրիչների հարաբերական կարևորությունից ելնելով տեսակարար կշիռների որոշումն է: Աշխատանքի այս գլխում վեր են հանվել նաև սոցիալ-տնտեսական վերափոխումների մոդելները զարգացման տարբեր մակարդակ ունեցող երկրներում, ինչպես նաև բացահայտվել վերափոխումների չափանմուշային մոդելը և գնահատվել այդ մոդելից տարբերությունները յուրաքանչյուր երկրի համար:

Զարգացող տնտեսությամբ երկրներում վերափոխումների մոդելների ուսումնասիրության ու վերլուծության նպատակով կիրառել ենք գործոնային վերլուծության գործիքակազմը:

Վերոնշյալ մոտեցումից ելնելով՝ ատենախոսությունում ներկայացվել է Բերթելսման հիմնադրամի վերափոխումների համաթվերի՝ 100 երկրների համար գնահատված 17 բաղադրիչների (պետականություն, քաղաքական մասնակցություն, իրավունքի գերակայություն, ժողովրդավարական ինստիտուտների կայունություն, քաղաքական և սոցիալական ինտեգրում, սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակ, շուկա և մրցակցություն, արժութային և գնային կայունություն, սեփականության իրավունքի պաշտպանություն, բարեկեցության մակարդակ, տնտեսության նկարագիր, կայունություն, վերափոխումների կառավարման բարդության աստիճան, կառավարման ներուժ, ռեսուրսների արդյունավետ օգտագործում, համաձայնության ձեռքբերում, միջազգային համագործակցություն) արժեքների հիման վրա կատարված գործոնային վերլուծության արդյունքները:

Վերլուծության արդյունքում առանձնացվել է սոցիալ-տնտեսական վերափոխումների երկու մոդել: Առաջին մոդելը նկարագրում է վերափոխումների այնպիսի մոդել, որտեղ գերակա է ինստիտուցիոնալ ձևափոխությունները, և մեծ կարևորություն է տրվում քաղաքական մասնակցություն, ժողովրդավարական ինստիտուտների կայունություն, համաձայնության ձեռքբերում, իրավունքի

գերակայություն, քաղաքական և սոցիալական ինտեգրում, միջազգային համագործակցություն, կառավարման ներուժ բաղադրիչներին: Այդ պատճառով այս մոդելին կարող ենք պայմանականորեն անվանել «ինստիտուցիոնալ վերափոխումներ»: Այն առավել բնութագրական է սոցիալ-տնտեսական զարգացման համեմատաբար ցածր մակարդակ ունեցող այնպիսի երկրների համար, ինչպիսիք են Ուրուգվայը, Չիլին, Սենեգալը, Կոստա Ռիկան, Բոթսվանան, Նիգերը, Էլ Սալվադորը, Նամիբիան, Բենին:

Վերափոխումների երկրորդ մոդելի պարագայում վերափոխումների առանցքում սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակ, տնտեսության նկարագիր, բարեկեցության մակարդակ, պետականություն, կայունություն, շուկա և մրցակցություն, սեփականության իրավունքի պաշտպանություն, արժութային ու գնային կայունություն հենասյուներն են: Ուստի՝ այն կարող ենք բնորոշել որպես «տնտեսական վերափոխումների» մոդել: Այս մոդելը հիմնականում բնորոշ է բարեկեցության բարձր մակարդակ ունեցող այնպիսի երկրներին, ինչպիսիք են Սինգապուրը, Սլովենիան, Հունգարիան, Չեխիան, Հարավային Կորեան: Ուշագրավ է, որ Էստոնիան, Լեհաստանը, Լատվիան, Լիտվան վերափոխումներն իրականացրել են «հիբրիդային» մոդելի շրջանակներում՝ հաջողությամբ համադրելով վերափոխումների երկու հիմնական ուղղությունների առանձնահատկությունները:

Ուշագրավ է, որ «տնտեսական վերափոխումներ» գործոնով բարձր արժեք ունեցող երկրները հայտնվել են վերափոխումների լավագույն արդյունք արձագրած երկրների խմբում: Հետևաբար՝ այս մոդելի շրջանակներում ընդգծված առաջատարը՝ Սինգապուրը, վերափոխումների տեսանկյունից կարելի է համարել չափանմուշային: Ուստի, այստեղ կիրառելով կլաստերային վերլուծության գործիքակազմը, կարելի է գտնել չափանմուշային երկրից մյուս երկրների հեռավորությունները, ինչը կլինի չափանմուշից կամ առավելագույն մակարդակից տվյալ երկրի վերափոխումների արդյունքների տարբերության կամ «տնտեսական վերափոխումների» հետամնացության չափի գնահատական:

Հարկ է նշել, որ երկրների միջև հեռավորությունների հաշվարկման եղանակներից գործնական առավել լայն կիրառություն ունի Էվկլիդյան հեռավորությունը, որը հաշվարկվում է հետևյալ բանաձևով[3].

$$d_{ij} = \sqrt{\sum_{k=1}^{m} (x_{ik} - x_{jk})^2} \qquad (1)$$

որտեղ՝ d_{ij}-ը – i և j երկրների միջև հեռավորությունն է, m-ը – մասնակի ցուցանիշների թիվն է, որոնցով նկարագրվում են երկրները, x_{ik}, x_{jk} –

[3]Տե՛ս Буреева Н.Н., Многомерный статистический анализ с использованием ППП “Statistica”, Учебно-методический материал по программе повышения квалификации “Применение программных средсв в научных исследованиях и преподавании математики и механики”, Нижний Новгород, 2007, էջ 13:

համապատասխանաբար i-րդ և j-րդ երկրների k-րդ մասնակի ցուցանիշի արժեքներն են:

Ատենախոսությունում ներկայացվել է զարգացող տնտեսությամբ երկրների էվկլիդյան հեռավորությունը չափանմուշային համարվող երկրից՝ Սինգապուրից: Ստացված արդյունքներից կարելի է եզրակացնել, որ Հայաստանը վերափոխումների արդյունքներով նկատելիորեն հեռու է չափանմուշային երկրից՝ Սինգապուրից: Ընդհանուր առմամբ, «տնտեսական վերափոխումների» հետամնացության այս ցուցանիշով Հայաստանը Սինգապուրին ավելի մոտ է, քան օրինակ՝ Ադրբեջանը, Իրանը, Ղազախստանը, սակայն ավելի հեռու, քան՝ Ռուսաստանը, Վրաստանը և Թուրքիան:

Զարգացող տնտեսությամբ երկրներում շուկայական տնտեսության ձևավորմանն ուղղված վերափոխումների նպատակադրումն ու կենսագործումը անխուսափելիորեն կապված է վերափոխումների արդյունքների գնահատման հետ: Այն առանցքային նշանակություն ունի սոցիալ-տնտեսական վերափոխումների քաղաքականությունը վերանայելու, ճշգրտելու, ուղենիշները հստակեցնելու, իրագործման հիմնախնդիրները վերհանելու և դրանց լուծման ուղիները մշակելու տեսանկյունից: Ընդհանրապես, վերափոխումների արդյունքների համալիր և համակողմանի գնահատումը բարդ մեթոդական խնդիր է, որը միշտ եղել և մնում է տարբեր միջազգային կառույցների, հետազոտական կենտրոնների, ինստիտուտների ուսումնասիրության առանցքում: Ներկայումս մասնագիտական և հետազոտական շրջանակներում կիրառվում են սոցիալ-տնտեսական վերափոխումների առանձին ոլորտները գնահատող ամենատարբեր ընդհանրական ցուցանիշներ: Այդ գնահատականների հաշվարկման մեթոդաբանության վերլուծությունից ակնհայտ են դառնում դրանց ձևավորման հանգուցային խնդիրները, որոնց հետ բախվում են միջազգային հեղինակավոր կազմակերպությունները: Մեթոդական լուրջ հիմնախնդիր է, թե ինչքանով են համաթվում ընդգրկված ցուցանիշները համակողմանիորեն և ամբողջական բնութագրում առանձին ուղղություններում սոցիալ-տնտեսական վերափոխումները: Համաթվերի մեծ մասը բնութագրում են ոչ թե ոլորտն ամբողջությամբ, այլ միայն դրա մի մասը:

Կարևոր հիմնահարց է նաև վերափոխումների ընդհանրական համաթվի բաղադրիչ-ցուցանիշների տեսակարար կշիռների որոշումը: Հարկ է նկատել, որ վերափոխումները բնութագրող համաթվերի մեծ մասը բաղադրիչ ցուցանիշների նկատմամբ կիրառում են հավասար կշիռներ՝ անկախ իրենց կարևորությունից: Նման մոտեցումը, մեր կարծիքով, մեթոդական առումով լուրջ բացթողում է: Ակնհայտ իրողություն է, որ սոցիալ-տնտեսական վերափոխումները նկարագրող ցուցանիշներն ունեն տարբեր կարևորություն, հետևապես, այն բնութագրող ցուցանիշները չեն կարող ունենալ միևնույն տեսակարար կշիռները: Այս առումով, կարևոր նշանակություն է ստանում սոցիալ-տնտեսական վերափոխումների այնպիսի ընդհանրական գնահատականի ձևավորումը, որի բաղադրիչները կունենան իրենց հարաբերական կարևորությունից բխող տեսակարար կշիռներ:

Ուստի՝ ատենախոսությունում ներկայացվել է այդպիսի մի մեթոդի լրամշակված տարբերակ, որի առանցքում վիճակագրական բազմաչափ տվյալների գործոնային վերլուծության գործիքակազմի կիրառմամբ սոցիալ-տնտեսական վերափոխումների մասնակի ցուցանիշների տեսակարար կշիռների որոշումն է: Մասնավորապես՝ գործոնային վերլուծության մեթոդը հնարավորություն է տալիս իրականացնել սոցիալ-տնտեսական վերափոխումների ցուցանիշների ընդհանրացում՝ միասնական գնահատականի շրջանակներում՝ հաշվի առնելով բաղադրիչ ցուցանիշներից յուրաքանչյուրի հարաբերական կարևորությունը:

Ստացված կշռային գործակիցների և սոցիալ-տնտեսական վերափոխումների մասնակի ցուցանիշների արժեքների հիման վրա էլ կարող ենք դուրս բերել սոցիալ-տնտեսական վերափոխումների ընդհանրական գնահատականը, որը կարող ենք ներկայացնել հետևյալ տեսքով.

$$y = \sum_{i=1}^{n} w_i x_i, \qquad i = 1,2,\cdots,n \ , \tag{2}$$

որտեղ y-ը սոցիալ-տնտեսական վերափոխումների ընդհանրական գնահատական է, x_i-ը i-րդ ոլորտի վերափոխումների մակարդակի գնահատականներն են, իսկ w_i-ը՝ դրանց տեսակարար կշիռները: Հարկ է նշել, որ վերափոխումների բոլոր x_i գնահատականները պետք է ունենան միևնույն չափողականությունը և ուղղվածությունը, ուստի համապատասխան հաշվարկներում դրանք ներառելուց առաջ անհրաժեշտ է իրականացնել որոշակի նորմավորում:

Այսպես, եթե ելակետային x_i ցուցանիշը համապատասխան y ընդհանրական գնահատականի հետ կապված է մոնոտոն աճող կախվածությամբ (այսինքն x_i-ի բարձր արժեքը վկայում է դրական տեղաշարժերի մասինը), ապա $\tilde{X}_i$ նորմավորված փոփոխականը կհաշվարկվի հետևյալ բանաձևով[4].

$$\tilde{X}_i = \frac{x_i - x_{min}}{x_{max} - x_{min}} \tag{3}$$

որտեղ $\tilde{X}_i$- տվյալ երկրի՝ սոցիալ-տնտեսական վերափոխումների ցուցանիշի նորմավորված արժեքն է, x_i- տվյալ երկրի՝ սոցիալ-տնտեսական վերափոխումների ցուցանիշի փաստացի արժեքը, x_{max}-ը և x_{min}-ը տվյալ երկրի՝ ելակետային x_i ցուցանիշի համապատասխանաբար առավելագույն և նվազագույն արժեքներն են:

Եթե ելակետային x_i ցուցանիշը վերլուծվող y ընդհանրական գնահատականի հետ կապված է մոնոտոն նվազող կախվածությամբ, այսինքն x_i-ի բարձր արժեքը վկայում է բացասական տեղաշարժերի մասինը, ապա $\tilde{X}_i$ նորմավորված չափանիշը կարելի է հաշվարկել հետևյալ կերպ[5].

$$\tilde{X}_i = \frac{x_{max} - x_i}{x_{max} - x_{min}} \tag{4}$$

---

[4]Տե՛ս Айвазян С.А., Анализ качества и образа жизни населения, эконометрический подход, ЦЭМИ РАН, М.: Наука 2012, էջ 84:

[5]Տե՛ս նույն տեղը, էջ 84:

Այսպիսով, նորմավորման արդյունքում ստացված վերափոխումների մասնակի գնահատականների արժեքների և տեսակարար կշիռների արտադրյալը հանրագումարի բերելով կարող ենք դուրս բերել վերափոխումների ընդհանրական համաթիվը:

Ներկայացված մոտեցման հիման վրա ձևավորել ենք սոցիալ-տնտեսական վերափոխումների ընդհանրական համաթիվը և գնահատել 110 երկրների սոցիալ-տնտեսական վերափոխումների արդյունքները:

Որպես սոցիալ-տնտեսական ընդհանրական համաթվի ցուցանիշներ դիտարկել ենք Բերթելսման հիմնադրամի վերափոխումների համաթվերի բաղադրիչները: Իր առավելություններով հանդերձ, Բերթելսման հիմնադրամի վերափոխումների համաթվերը ունեն նմանատիպ այլ համաթվերին բնորոշ մեթոդական թերություն: Մասնավորապես՝ համաթվերում բոլոր բաղադրիչները կշռվում են հավասարապես: Ավելին՝ Բերթելսման հիմնադրամը երկրները վարկանիշավորում է ըստ Կարգավիճակային և Կառավարման համաթվերի, սակայն բացակայում է երկրների միասնական վարկանիշավորումը: Հետևապես, Բերթելսման հիմնադրամի վերափոխումների համաթվերը մեր կողմից առաջարկվող մեթոդական ձևափոխությունների կիրառման լայն տիրույթ են ապահովում:

Այսպիսով, Բերթելսման հիմնադրամի վերափոխումների ցուցանիշների հավաքածուից առանձացրել ենք այն գնահատականները, որոնք բնութագրում են վերափոխումների սոցիալական և տնտեսական դիտակետերը: Դրանք են՝ սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակ, շուկա և մրցակցություն, արժութային և գնային կայունություն, սեփականության իրավունքի պաշտպանություն, բարեկեցության մակարդակ, տնտեսության նկարագիր, կայունություն, քաղաքական և սոցիալական ինտեգրում, վերափոխումների կառավարման բարդության աստիճան, կառավարման ներուժ, ռեսուրսների արդյունավետ օգտագործում, համաձայնության ձեռքբերում, միջազգային համագործակցություն:

Ատենախոսությունում ներկայացվել է 110 երկրների համար հաշվարկված սոցիալ-տնտեսական վերափոխումների ընդհանրական համաթվի արժեքը:

Ստացված արդյունքներից ելնելով՝ սոցիալ-տնտեսական վերափոխումների ընդհանրական համաթվով, հետազոտվող երկրների շարքում առաջատարը Էստոնիան է: Սոցիալ-տնտեսական վերափոխումները բարձր արդյունք են ապահովել նաև Ուրուգվայում, Չեխիայում, Լիտվայում, Լեհաստանում, Սլովենիայում, Սլովակիայում: Հարկ է նշել, որ վարկանիշային աղյուսակում ցածր տեղ են զբաղեցնում հիմնականում աֆրիկյան երկրները, ինչպես նաև Տաջիկստանը Թուրքմենստանը, Ուզբեկստանը և այլն:

Ինչ վերաբերվում է Հայաստանին, ապա 110 երկրների շարքում զբաղեցնում է 48-րդ տեղը՝ առաջ անցնելով Ռուսաստանից, Ադրբեջանից, Իրանից, սակայն զիջելով հարևան Վրաստանին և Թուրքիային:

Հետազոտական հետաքրքրություն է ներկայացնում նաև մշակված համաթվի արժեքների շարժընթացի վերլուծությունը: Այդ նպատակով նմանատիպ

հաշվարկներ են արվել նաև 2003-2014 թվականների առանձին ժամանակահատվածների համար:

Ուշագրավ է նաև այն, որ հետազոտության արդյունքների համաձայն՝ 2016թ.-ին 2003թ.-ի նկատմամբ հետընթաց են արձանագրել մի կողմից «առաջին սերնդի» լրջագույն վերափոխումներ արձանագրած երկրները, որոնք կանգնած են շուկայական տնտեսակարգի ձևավորման և ինստիտուտների կայացման հիմնախնդրի առջև, մյուս կողմից՝ «երկրորդ սերնդի» վերափոխումներ իրականացնող երկրները, որոնք տնտեսապես ավելի գործուն համակարգ ունեն, սակայն տարբեր պատճառներով ցանկալի արդյունք չեն արձանագրել:

Ներկայացված մեթոդական մոտեցման կիրառումը հնարավորություն է տալիս իրականացնել սոցիալ-տնտեսական վերափոխումների համակողմանի գնահատում ընդհանրական համաթվի միջոցով: Այն հետազոտական լայն տիրույթ է ապահովում վերափոխումների արդյունքների քանակական գնահատման, համեմատական վերլուծության, սոցիալ-տնտեսական վերափոխումների քաղաքականության խորացման հնարավորությունների ու հիմնական բացթողումների բացահայտման համար:

Վերափոխումների առավել ամբողջական և խորը գնահատման նպատակով փորձ է արվել զարգացող տնտեսությամբ երկրները դասակարգել ըստ սոցիալ-տնտեսական հարաբերությունների առանձին դիտակետերը նկարագրող համաթվերի: Այդ նպատակով կիրառել ենք կլաստերային վերլուծության գործիքակազմը: Վերլուծության մեջ դիտարկել ենք ինչպես մեր կողմից մշակված սոցիալ-տնտեսական վերափոխումների ստացված ընդհանրական համաթիվը, այնպես էլ միջազգային կառույցների կողմից մշակվող՝ կոռուպցիայի ընկալման, գործարարությամբ զբաղվելու, մարդկային զարգացման, ժողովրդավարության համաթվերը:

Կլաստերային վերլուծության գործիքակազմի կիրառման արդյունքում ձևավորվել է երկրների երկու խումբ՝ «հետնապահ» և «առաջատար»: Ներկայացված կլաստերների բնութագրիչներից ելնելով՝ «հետնապահ» երկրների խմբում տեղ են գտել գործարար ակտիվության, տնտեսական զարգացման, մարդկային ներուժի, համեմատաբար ցածր մակարդակ ունեցող երկրները, որտեղ դեռևս ձևավորված չեն ժողովրդավարական ինստիտուտները: Այս կլաստերում ընդգրկված երկրներում դեռևս սոցիալ-տնտեսական վերափոխումների անհրաժեշտություն կա: Մինչդեռ «առաջատար» կլաստերում ներառված են սոցիալ-տնտեսական վերափոխումների տեսանկյունից բարձր արդյունք արձանագրած երկրները, որոնք ակտիվ միջոցառումներ են իրականացրել շուկայական ինստիտուտների ձևավորման, կենսունակ ժողովրդավարական ինստիտուտների ձևավորման, մարդկային զարգացման, գրավիչ գործարար միջավայր ունեցող, կոռուցիայի դեմ պայքարում: Այս կլաստերում տեղ են գտել սոցիալ-տնտեսական վերափոխումներով աչքի ընկնող այնպիսի երկրներ, ինչպիսիք են Սինգապուրը, Էստոնիան, Հունգարիան, Լեհաստանը, Հարավային Կորեան և այլն:

Վերը նշվածից ելնելով «առաջատար» կլաստերի վերափոխումների ընդհանրական գնահատականների միջին արժեքները կարելի է որոշակի վերապահումներով համարել նպատակակետ՝ «հետնապահ» կլաստերում ընդգրկված երկրների համար: Այս տեսանկյունից, կլաստերային վերլուծությունը հնարավորություն է տալիս ևս մեկ կարևոր արդյունք ստանալու: Դիտարկելով «առաջատար» կլաստերում ըստ առանձին համաթվերի միջին արդյունքները՝ կարելի է բացահայտել առանձին երկրների վերափոխումների շեղման աստիճանը: Այսպես՝ համադրելով ըստ առանձին համաթվերի «առաջատար» կլաստերի միջին արժեքները և ՀՀ համապատասխան գնահատականները՝ կարող ենք արձանագրել, որ միայն գործարարությամբ զբաղվելու համաթվով է Հայաստանը գերազանցում «առաջատար» կլաստերի միջին մակարդակը:

Պատկերն այլ է սոցիալ-տնտեսական վերափոխումների, մարդկային զարգացման, կոռուպցիայի ընկալման և ժողովրդավարության համաթվերի դեպքում: Սա վկայում է այն մասին, որ ՀՀ Կառավարության կողմից ժողովրդավարական ինստիտուտների կայացման, հակակոռուպցիոն, մարդկային ներուժի իրացմանը և շուկայական ինստիտուտների ձևավորմանն ուղղված միջոցառումները դեռևս գոհացուցիչ չեն:

Հետազոտության արդյունքները կարևոր նշանակություն ունեն սոցիալ-տնտեսական վերափոխումների հիմնախնդիրների բացահայտման, պետական քաղաքականության ուղենիշների հստակեցման, գործիքների և մեխանիզմների ընտրության համար:

Աշխատանքի **եզրակացություններում**, հեղինակն ընդհանրացրել և ամփոփել է հետազոտության հիմնական արդյունքները, որոնք ներկայացվել են հետևյալ դրույթներով.

1. Սոցիալ-տնտեսական վերափոխումները շուկայական տնտեսակարգի ձևավորման գործընթացում տնտեսական հարաբերությունների և կապերի, տնտեսավարման համակարգի տարրերի և դրանց կառուցվածքների, սոցիալ-տնտեսական քաղաքականության իրականացման գերակայությունների, միջոցների և ուղիների փոփոխություններն են, որոնք ուղղված են տնտեսության զարգացմանը: Հարկ է նշել, որ մասնագիտական և հետազոտական շրջանակներում լայնորեն կիրառվում են սոցիալ-տնտեսական վերափոխումների արդյունքները գնահատող ընդհանրական ցուցանիշներ: Իրենց առավելություններով հանդերձ, վերը նկարագրած համաթվերից յուրաքանչյուրն ունի թերություններ, որոնք էլ պայմանավորում են դրանց կիրառման սահմանափակությունը:

2. Վերջին երկու տասնամյակում զարգացող տնտեսությամբ երկրներում իրականացված վերափոխումների սկզբնական շրջանում (1990-1992թթ.) առանձնացվում էր վերափոխումների երկու մոդել, որոնցից առաջինի շրջանակներում շեշտադրվում էր խոշոր կազմակերպությունների մասնավորեցումը, ձեռնարկությունների վերակառուցումը, մրցակցային քաղաքականությունը, իսկ մյուսը՝ մասնավորեցումը և ազատականացումը:

Հետագայում, 1993-2014թթ. զարգացող տնտեսությամբ 28 երկրներում վերափոխումներն իրականացվել են մեկ միասնական մոդելի շրջանակներում, որը վկայում է մեր կողմից դիտարկվող երկրների վերափոխումների քաղաքականության ընդհանրությունների մասին: Հատկանշական է, որ 1993-2006թթ. զարգացող տնտեսությամբ երկրներում համեմատաբար քիչ կարևորություն է տրվել մրցակցային միջավայրի բարելավմանն ուղղված մրցակցային քաղաքականության մշակմանն ու կենսագործմանը: Մինչդեռ 2007-2014թթ. զարգացող տնտեսությամբ երկրների վերափոխումների քաղաքականությունում, հավասարապես կարևորվել են վերափոխումների քաղաքականության բոլոր բաղադրիչները (կազմակերպությունների մասնավորեցումը, ձեռնարկությունների վերակառուցումը, գների ազատականացումը, փոխարժեքի և առևտրի ազատականացումը, մրցակցային քաղաքականությունը):

3. Կլաստերային վերլուծության գործիքակազմի կիրառմամբ առանձնացվել է սոցիալ-տնտեսական վերափոխումների՝ լավագույն, միջին և վատագույն արդյունք արձանագրած երկրների խմբեր: Այսպես՝ 1. լավագույն կլաստերում գերակշռում են վերափոխումների համեմատաբար բարձր արդյունքներ արձանագրած, առավել կայացած և գործուն ինստիտուտներ, սոցիալ-տնտեսական զարգացման համեմատաբար բարձր մակարդակ երկրները, 2. միջին կլաստերում՝ սոցիալ-տնտեսական վերափոխումներ նախաձեռնած և դեռևս ցածր արդյունքներ ապահովված երկրները, որոնք շարունակում են իրականացնել ինստիտուցիոնալ և կառուցվածքային վերափոխումներ, 3. վատագույն կլաստերում՝ թերզարգացած ժողովրդավարական ինստիտուտներ ունեցող, սոցիալ-տնտեսական զարգացման համեմատաբար ցածր մակարդակ ունեցող երկրները, որտեղ դեռևս լայնամասշտաբ սոցիալ-տնտեսական վերափոխումների անհրաժեշտություն կա:

4. Ներկայացվել է նաև սոցիալ-տնտեսական վերափոխումների լավագույն արդյունք արձանագրած երկրների խմբի համար վերափոխումների ցուցանիշների շեմային արժեքները, որոնք ակնհայտորեն ցույց են տալիս տնտեսության ձևափոխությունների այն ուղղությունները, որտեղ սոցիալ-տնտեսական վերափոխումների քաղաքականության վերանայման անհրաժեշտություն կա:

5. Գործոնային վերլուծության գործիքակազմի կիրառմամբ առանձնացվել է զարգացող տնտեսությամբ երկրներում սոցիալ-տնտեսական վերափոխումների երկու հիմնական մոդելներ՝ «ինստիտուցիոնալ» և «տնտեսական»: Առաջինը նկարագրում է վերափոխումների այնպիսի մոդել, որտեղ գերակա է ինստիտուցիոնալ ձևափոխությունները, երկրորդը՝ բնակչության կենսապայմանները, սոցիալական նպատակային քաղաքականությունը, տնտեսության կայուն զարգացումը, դրամավարկային և հարկաբյուջետային հետևողական քաղաքականությունը, սեփականության իրավունքի պաշտպանությունը, արժութային և գնային կայունությունը:

6. Որոշվել է սոցիալ-տնտեսական վերափոխումների տեսանկյունից չափանմուշային երկիրը՝ Սինգապուրը, և հաշվարկվել չափանմուշային երկրից

մյուս զարգացող տնտեսությամբ երկրների տնտեսական վերափոխումների «հետամնացության» չափը:

7. Ատենախոսությունում մշակվել է սոցիալ-տնտեսական վերափոխումների արդյունքների համալիր գնահատման մեթոդական մոտեցում, որի առանցքում սոցիալ-տնտեսական վերափոխումների ընդհանրական համաթվի բաղադրիչների հարաբերական կարևորության աստիճանից ելնելով դրանց տեսակարար կշիռների որոշումն է:

8. Կլաստերային վերլուծության գործիքակազմի կիրառմամբ փորձ է արվել երկրները դասակարգել ըստ սոցիալ-տնտեսական հարաբերությունների առանձին դիտակետերը նկարագրող ցուցանիշների համախմբության: Վերլուծության արդյունքում ձևավորվել է երկրների երկու խումբ՝ «հետնապահ» և «առաջատար»: Առաջինում տեղ են գտել գործարար ակտիվության, տնտեսական զարգացման, մարդկային ներուժի համեմատաբար ցածր մակարդակ ունեցող երկրները, որտեղ դեռևս ձևավորված չեն ժողովրդավարական ինստիտուտները: Ըստ այդմ, «հետնապահ» կլաստերում ընդգրկված երկրներում դեռևս սոցիալ-տնտեսական վերափոխումների անհրաժեշտություն կա, մինչդեռ «առաջատար» կլաստերում ներառված են սոցիալ-տնտեսական վերափոխումներ տեսանկյունից նշանակալի արդյունքի հասած երկրները

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ գիտական հրապարակումներում՝

1. Խաչատրյան Ա., Զարգացող տնտեսությամբ երկրներում սոցիալ-տնտեսական վերափոխումների արդյունքների վիճակագրական վերլուծություն, ՀՊՏՀ, Բանբեր, 2 (46), 2017թ.,Երևան, էջ 45-55,
2. Խաչատրյան Ա., Վերափոխումների արդյունքների ընդհանրական գնահատումը և վերլուծությունը, Հայաստան. ֆինանսներ և էկոնոմիկա, 3-4 (199-200) , 2017թ., Երևան, էջ 150-152,
3. Խաչատրյան Ա., Սոցիալ-տնտեսական վերափոխումների ռազմավարության հետազոտության մեթոդական մոտեցումները, Հանրային կառավարում, 2, 2017թ., Երևան, էջ 41-48,
4. Խաչատրյան Ա., Սոցիալ-տնտեսական վերափոխումների արդյունքների կլաստերային վերլուծություն, «Գործարար միջավայրի բարելավման և միջազգային տնտեսական համագործակցության ընդլայնման արդի հիմնախնդիրները ՀՀ-ում» խորագրով ՀՊՏՀ 26-րդ գիտաժողովի նյութեր,Երևան, Տնտեսագետ, 2017թ., էջ 288-293,
5. Խաչատրյան Ա., Թորոսյան Ա., Զարգացող տնտեսությամբ երկրներում իրականացրած սոցիալ-տնտեսական վերափոխումների արդյունքների գնահատումը, Ֆինանսներ և էկոնոմիկա, 5-6 (189-190), 2016թ.,Երևան, էջ 105-107:

ХАЧАТРЯН АНИ САМВЕЛОВНА

ПРОБЛЕМЫ СОВЕРШЕНСТОВАНИЯ МЕТОДОЛОГИИ ИНДЕКСОВ ОЦЕНКИ СОЦИАЛЬНО-ЭКОНОМИЧЕСКИХ РЕФОРМ В РАЗВИВАЮЩИХСЯ СТРАНАХ

РЕЗЮМЕ

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата экономических наук по специальности 08.00.01 – “Общая экономика”.

Защита диссертации состоится 8 декабря 2017 года, в 13:30 часов, на заседании Специализированного совета по экономике 015 ВАК РА, действующего в Ереванском государственном университете, по адресу: 0009, г. Ереван, ул. Х. Абовяна 52.

РЕЗЮМЕ

Современные тенденции развития мировой экономики создают новые вызовы для развивающихся стран, для преодоления которых разработка и последовательная реализация программ по-прежнему актуальна. В связи с этим, политика социально-экономических реформ является важнейшим залогом экономического развития.

Ключевым компонентом политики социально-экономических реформ является количественная оценка результатов реформ, которая, с точки зрения теоретического обоснования и практического значения, играет решающую роль в разъяснении, корректировке ориентиров, разработке принципов реализации и методов, а также достижении желаемых результатов. По этой причине оценка результатов реформ всегда была в поле исследований различных международных организаций, таких как Всемирный Банк, Всемирный экономический форум, Европейский банк реконструкции и развития, Фонд Бертельсмана и др., которые пытаются разработать различные интегральные показатели реформ, которые в определенной степени измеряют результаты реформ в отдельных областях. Хотя подход международных организаций к разработке индексов реформ находится в рамках экономической логики, методология их расчета довольно ограничена и проблематична.

Необходимость решения этих проблем обусловливает актуальность темы тезиса для объективного отражения результатов социально-экономических реформ, выявления возможностей и препятствий, а также на основе оценок разработки и реализации стратегических подходов к социально-экономическим реформам.

Основная цель диссертации – выявить вопросы совершенствования методологии комплексной оценки результатов социально-экономических реформ, представить возможные пути их решения.

Для реализации указанной цели в работе были поставлены и решены следующие задачи:

- ✓ изучить методологические особенности расчета интегральных показателей социально-экономических реформ различными международными организациями и исследовательскими центрами;
- ✓ выявить проблемы интегральной оценки результатов реформ и обосновать необходимость их решения;
- ✓ проанализировать и оценить результаты социально-экономических реформ в развивающихся странах;
- ✓ определить особенности и направления социально-экономических реформ в развивающихся странах;
- ✓ с точки зрения социально-экономических реформ оценить размер разницы других стран от страны эталона;
- ✓ выполнить сравнительный анализ развивающихся стран на основе показателей социально-экономических реформ, а также оценить отклонения от желаемых результатов социально-экономических реформ;
- ✓ разработать методологический подход к интегральной оценке социально-экономических реформ на основе определения взвешенных коэффициентов компонентов интегрального индекса социально-экономических реформ, исходя из их важностей.

Результаты, полученные в диссертации, их теоретико-методологическое и прикладное значение, из которых следующие - научная новизна:

1. Были оценены результаты социально-экономических реформ развивающихся стран, выявлены основные характеристики групп стран с наилучшими результатами с точки зрения социально-экономических реформ.
2. С применением инструментов факторного анализа были обоснованы ключевые модели социально-экономических реформ: «институциональные» и «экономические».
3. Были оценены основные характеристики страны-эталона с точки зрения социально-экономических реформ, определено отличие других стран от страны-эталона, для выявления степень отсталости “экономических реформ”.
4. Был разработан методологический подход к интегральной оценке социально-экономических реформ, основой которого является определение удельных весов компонентов интегрального индекса исходя из их важностей.

Практическое применение полученных в диссертации результатов дает возможность интегрально оценить результаты социально-экономических реформ в развивающихся странах для выявления препятствий и возможностей углубления реформ, а также уточнения приоритетов и реализации эффективной политики социально-экономических реформ.

KHACHATRYAN ANI SAMVEL

ISSUES CONCERNING THE IMPROVEMENT OF THE METHODOLOGY OF INDICES ASSESSING SOCIAL-ECONOMIC REFORMS IN DEVELOPING COUNTRIES

The abstract of the dissertation for pursuing the PhD degree of Economics in the field of 08.00.01 – "General Economics".

The defense of the dissertation will take place at 13:30 on December 8, 2017 at the meeting of Specialized Council 015 in Economics of Supreme Certifying Commission of RA acting at the Yerevan State University. Address: 52 Abovyan Str., Yerevan, 0009.

SUMMARY

Current trends of the development of the world economy provides new challenges for developing countries. Therefore the development and implementation of programs, that are directed to overcome these challenges, are still on the agenda. In this regard, the policy of social-economic reforms are considered as the most important guarantee of economic development. It should be noted that the key component of the social-economic reform policy is the quantitative assessment of the results of reforms. It is essential from both theoretical and empirical perspectives in order to correct, adjust priorities of reform policy, develop principles and methods of implementation, achieve final goals.

Therefore, the assessment of the results of reforms has always been the subject of researches of different international organizations such as the World Bank, the World Economic Forum, the European Bank for Reconstruction and Development, the Bertelsman Foundation, etc. They try to develop various integral indicators of reforms that to some extent measure the results of reforms in a particular sector.

Although the main approach of formulation of indices of reforms is within the framework of economic logic, the methodology of their calculation is quite limited and problematic. The necessity of solving those issues defines the modernity of the thesis theme in order to reflect the results of social-economic reforms, reveal the opportunities and obstacles and finally develop and implement strategic approaches of social-economic reforms based on the assessment.

The objective of the paper is to reveal the issues of the improvement of the methodology of comprehensive assessment of the results of social and economic reforms and the possible ways of their solution.

For this purpose the following problems have been put forward and solved in the paper:

✓ to explore the methodological features of the calculation of the integral indicators of social-economic reforms that are developed by different international organizations and research centers,

✓ to identify the issues of the comprehensive assessment of the results of reforms and justify the urgency of finding their solutions,

✓ to analyze and evaluate the results of social-economic reforms in developing countries,

✓ to reveal the main directions and features of social-economic reforms in developing countries, quantitatively assess the difference between other countries and sample country from the perspectives of social-economic reforms,

✓ to carry out classification and comparative analysis of developing countries, evaluate the deviation of results of social-economic reforms from its targets, based on the indicators of social-economic reforms,

✓ to develop methodological approach for the integral assessment of social-economic reforms concentrating on the determination of weights of components of the integral index of reforms based on their relative importance.

The results in the paper have theoretical-methodological and practical importance and the scientific novelty is that:

1. The results of social-economic reforms in developing countries have been assessed, the key characteristics of countries with the best results have been revealed.
2. Applying the tools of factor analysis, two models of social-economic reforms in developing countries ("institutional" and "economic") have been explored.
3. From the perspectives of social-economic reforms the characteristics of the "sample" country have been assessed, the difference of other countries from the "sample" country has been estimated as a degree of backwardness of "economic reforms".
4. The methodological approach of the integral assessment of social-economic reforms has been developed, that is based on determining the weights of the components of the integral index of social-economic reforms considering their comparative importance.

The results of the research give an opportunity to assess the results of social-economic reforms integrally in order to reveal the obstacles and opportunities to deepen reforms, as well as clarify priorities and implement effective social-economic reforms.